

891.99

2-17

6 NOV 2011

242

81

891.542-1

3-17

Պղտարներ բոլոր երկրների միացե՛ք!

ՅԵՆՈՐ ՅԵՆՈՐՆԵՆ



ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ

ԵՐԳԵՐ

Հէ՛յ, ձեզ մատաղ բանւոր տղերք,
Մէկ էլ, մէկ էլ, մի գարկ տւէք.
Մի գարկ տւէք ջարդւած գահին,
Որ խորտակւի նա հիմնովին:

Թ. Թ.

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան «ԷՊՈՒՍ» Մուղկլովի պեր. № 8.

1917

[illegible]

my

ՅԵԿՈՐ ՅԵԿՈՐԻԵՆ


$$\frac{1001}{9740}$$

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ

ԵՐԳԵՐ

Հէ՛յ, ձեզ մատաղ բանւոր տղերք,
Մէկ էլ, մէկ էլ, մի զարկ տւէք,
Մի զարկ տւէք ջարդւած գահին,
Որ խորտակւի նա հիմնովին:

3. 3.



Þ Þ Ð Լ Ի Ս

Տպարան «ԷՊՕԽԱ» Մուղէյսկի պեր, № 8.

1917

Մ ԱՐ Ս Ե Լ Ի Է Զ*)

Հրաժարւենք, ընկերներ, հին օրէնքներից,
Նրանց փոշին թափ տանք մեր ոտքերից.
Մենք պաշտել չենք կարող ոսկէ կուռքերին,
Գարշում ենք բռնակալ ցարերից.

Մենք կերթանք հալածւած ընկերներին հետ,
Մենք կերթանք մերկ, սոված բանւորներին հետ,
Դաւադիր թշնամուն մենք միշտ կանարգենք,
Ու կուի նորան դուրս կը քարշենք:

Դէհ, ել, բողոքիր, այ բանւոր դասակարգ.
Ելէք թշնամուն կուելու, ջան եղբարք.
Թող դրոհ տայ ամբոխը անվախ, քաջ,
Առաջ... առաջ... առաջ...:

Բռնակալ հարուստներ անկուշտ յագուրդով
Ծծում են մեր արիւն-աշխատանք.
Գռվում են, յղփանում նրանք մեր քրտնով,
Պահանջում, որ մեր հացն իրենց տանք,
Սոված կաց—որ աղայք զըւարճանան,
Սոված կաց—որ խաղում բիրժային
Իրենց խիղճն ու հոգին վաճառքի տան,
Ու ծաղրեն մեր պատիւ մարդկային:

Դէհ, ել, բողոքիր, այ բանւոր... և այլն:

Դու հանգիստ կունենաս լոկ գերեզմանում,
Օր չանցնի—հարկերը չաւելնան.
Վամպիր ցարն կտանջի բեզ իր գնդանում,
Վամպիր ցարն կարօտ է քո արեան.
Նրան պէտք են միայն բիւր գինւորներ,

Դուրս քաշիր, տուր նրան զաւակիդ.
Նրան պէտք են խնձոյք ու պալատներ,
Տուր նրան հիւթերը ջղերիդ:

Դէհ ել, բողոքիր, այ բանւոր... և այլն:

Բաւ է էլ, որքան ցաւ կրեցինք մենք,
Այսուհետ պիտ կուենք հանապազ.
Հիւսիսից սկսած մինչև Արևելք—
Վօլգայից մինչ հեռաւոր Կովկազ.
Տէրտէրներ, ոսոխներ, հարուստներին
Եւ վամպիր թշնամի բիրդ ցարին,
Տուր ջարդիր, նզոված այդ չարերին,
Մինչ փայլի արեւը մեր օրին:

Դէհ, ել, բողոքիր այ բանւոր... և այլն:

Կըշողայ արիւնոտ արշալուսին
Արեւ սիրոյ, եղբայրութեան,
Նա զինւած արիւնով Ժողովրդին
Պիտ հասցնի նրան երջանկութեան.
Եւ կգայ օրը սուրբ ազատութեան,
Բռնութիւնն ու չարիք կըկորչին,
Եւ համայն մարդկութիւն սերտ միացած՝
Վեհ աշխատանքին ջերմ կը հանգչին:

Դէհ ել, բողոքիր, այ բանւոր... և այլն:
1905 թ.

*) Այն թարգմանական երգերը, որոնք կրում են աստղա-
նշան, յարմարեցրած լինելով իրենց համապատասխան եղանակ-
ներին, չեն ենթարկւում հայկական տաղաչափութեան:

ՎՈՐՇՈՎԵՆԿԱՆՈՒՄՆԵՐ *

Շաչում են ոխերիմ հողմերն անընդհատ,
Սև, մութ ոյժերը կատաղի ճնշում,
Նըրանց դէմ վարում ենք օրհասական մարտ,
Անյայտ մի վիճակ է մեզ դեռ սպասում.

Բայց մենք կպարզենք անվախ ու հպարտ
Ռազմի դրօշակը—բանաւորի ազատ,
Դրօշակը մեծ գործի ժողովրդական
Յանունն նոր կեանքի—սուրբ ազատութեան

Դէպի մարտ արեան,
Սրգար, սրբազան,
Քայլեցէ՛ք առաջ,
Բանաւորներ քաջ:

Մեռնում է մեր օրում բանաւորը սովից,
Նղբայրներ, միթէ էլի համբերենք,
Մեր կարիճ ընկերներն կաղախաններից
Հերոսին վայել՝ չեն սարսել երբէք.
Վեհ գաղափարի համար ընկնելով,
Ձեն կորել անհետ պատւի զոհերը,
Նըրանց անունը յաղթական երգերով
Պիտ յիշեն յետնորդ մեր սերունդները:
Դէպի մարտ արեան և այլն:

Ատելի է թագը բռնապետների,
Ամբոխի շղթան միայն պաշտելի,
Նըրա արիւնով ողողւած դահերը
Մեր ոսոխների արեամբ կը ներկենք.
Վրէժ ու սխանողոր բոլոր պիղծերին,
Բանաւորի արեան կարօտ ցեցերին,
Վրէժ, վրէժ ու մահ բոլոր պոռտակրատներին,
Մօտ է յաղթութեան ժամը պանծալի:
Դէպի մարտ արեան և այլն:

Смѣло, товарищи, въ ногу!

Անվախ, ընկերք, քայլենք շար-շար,
Հոգով կռոււմ ամբանանք,
Ազատութեան վեհ ճանապարհ | կրկնել
Կրօքով հարձակման մեզ համար:

Մեր օրոնքը՝ ազատութեան,
Մեզ ծնողը՝ աշխատանք,
«Շղթարութիւն, ազատութիւն» — | կրկնել
Յյս լինի մեր դաւանանք:

Շղթաներում շատ մանշեցինք,
Շատ էլ սոված մնացինք,
Սև օրերը անապանցանք — | կրկնել
Մօտէ՛ ժամը հատուցման:

Ժամ է այժմ էլ գործի դիմել,
Դէպի կռիւ պանալ:
Մեզ քաջերիս չէ՛ էլ վայել — | կրկնել
Մոլթ ու ժերից վախենալ:

Եթէ նորա գոհ էին, կուշտ —
Այդ էլ շնորհիւ բան արին
Եվ՝ կնքներ լեցանք փամփուշտ, | կրկնել
Հրացաններիս լիակներ ուրին:

Հզօր բազկով մենք յիտ մղենք
Լուծը ընկած մեր մէջքին,
Եւ մայր հողի կրօքին մխենք | կրկնել
Սի դրօշն աշխատանքի:

ԻՆՏԵՐՆԱՅԻՐՈՆԱԼ *)

Ելէ՛ք, անէծքի նշաւակներ,
 Քաղցի, ճորտերի ողջ աշխար
 Եռում է գայրոյթից մեր արտեր
 Մահւան կռիւ վրդե՛րու համար
 Բռնութեան աշխարհ մենք կուրենք
 Հիմնովին, ու մի նոր աշխար
 Նրա փոխարէն մենք պիտի հիմնենք:
 Ով ստրուկ էր—նա կը դառնայ տէր:
 Այս կլինի և վերջին
 Ե՛ւ վճռական մարտ,
 Ինտերնացիօնալին
 Կը յարի ամեն մարդ:

Մենք ենք միայն տէրը աշխարհի,
 Հօր գործը աշխատանքի:
 Երկրի տիրոջը պիտի լինենք մենք,
 Իսկ պարագիծները՝ երբէք:
 Ու թէ անեղ մի որոտ պայթի
 Դահիճ գամփռների զլխին,
 Մեզ համար նոր արեւ պիտ ծագի,
 Փայլի իր ջերմ ճառագայթով:
 Այդ կլինի և վերջին
 Ե՛ւ վճռական մարտ,
 Ինտերնացիօնալին
 Կը հարի ամեն մարդ:

ԹԱՂՄԱՆ ՔԱՅԼԵՐԳ *)


Դուք զոհ գնացիք կռւի մէջ վճռական,
 Ամբոխի սիրով անկեղծ տոգորւած:
 Դուք ջանք թափեցիք վերջին շունչ տալ նրբան,
 Տեսնել նրա կեանք, պատիւն ազատուած:

Երբեմն մաշւեցիք մութ, խոնաւ բանտերում,
 Անխիղճ դատաստան ձեր դէմ վճռեցին,
 Ոսոխ դահիճներ անողոք, արնախում,
 Շաշող շղթաներ ոտքիդ կռեցին:

Հասել է ժամը, արթնացել բանւորը,
 Հսկայ, քաջագորդիմում է մահին.
 Իսկ ձեզ, բարձր երթ, ընկերներ ձեր գործը
 Ազնիւ, վեհ տարաք ձեր ճանապարհին:

Ձեր յետքից կը գան թարմ ու նոր մարտիկներ,
 Պատրաստ գործելու, դիմելու մահին.
 Իսկ ձեզ, բարձր երթ, ընկերներ ձեր գործը
 Ազնիւ, վեհ տարաք ձեր ճանապարհին:
 1905 թ.





ՄԱՅԻՍԻ ՄԷԿԸ *)

Գարնան անդրանիկ, այս ուրախ օրին
Դո՛ւրս ելէք խումբ-խումբ, բանւոր ընկերներ՝,
Եւ ողջոյն տալով դաշտ ու ձորերին,
Երգէ՛ք ձեր ազատ, տօնական երգեր:

Գող արձագանքը ձեր յաղթ երգերի
Թո՛ղ սարսափ ազդի թշնամու սրտին.
Թո՛ղ ցնցի հոգին բռնաւորներէ,
Հանգիստը խլի ճնշող հարուստին:

Եւ թո՛ղ խլանայ ձայնը բռնութեան —
Աղմուկ չըլսւի գործարաններից.
Այսօր մեր տօ՛նն է Վե՛հ գիտակցութեան —
Թո՛ղ պայթի աղան յամառ գայրութից:



ՄԱԲԱՌՄԱՆ ԺԱՄԻՆ

Մուրճը ձեռքերիդ, մաքառման ժամին,
Որո՞տ ու թափով զարկեցէ՛ք սալին.
Առանց վարանման, կայծակի նման
զարկեցէ՛ք արագ՝
Քանի ջեռուցած երկաթն է տաք-տաք:

Եւ վայ է նբան, ով այս վեհ ժամին
Ե՛ւ կը վարանի և՛ կը թուլանայ.
Որ իր ձեռքերի կոշտերի վրայ
յոյս չի ունենայ:

Երկաթը շիկնած կը սառի այն ժամ,
Դէհ եկ ու նորից վառիր զուքուրան,
Նետիր զանգւածը, լարիր նորից ջանք,
որ յուզւի կրակ...
Ո՛չ, զարկէք, քանի երկաթն է տաք-տաք:

Մուրճը ձեռքերիդ պատրաստ միշտ մնայ,
Իսկ ով մաքառման դեռ չէ ընդունակ՝
Շարքերի միջև թող անհետանայ.
Թոյլերի չէ սեղ, ոչ գործը կատակ...
Դէհ, զարկե՛նք քանի երկաթն է տաք-տաք:

ԵՄ ՉԵՉ ԱՍ ՈՒՄ ԵՄ

Յս ձեզ ասում եմ, կգայ այն օրը,
Երբ իրաւագուրկ ամեն մի բանւոր
Իր աշխատանքի կդառնայ տէրը,
Ու ազատ անճոգ կապրի բաղտաւոր:

Նենգաւորները դժնդակ սրտից
 Կիրքը մարդկային կը կորչի անհետ,
 Կը լռի եսը շանթւած ամօթից
 Եւ գայլն ու գառը կապրեն իրար հետ:

Ու էլ չի տերել անարգ ստակը,
Մարդուն մարդոյ զէմ չի գինիւ անվերջ.
Ամբիօն կելնի հալալ վաստակը,
Բըար յոշոտող կուխն կտայ վերջ:

Ես ձեզ ասում եմ...մօտ է այն օրը...
Թող ստորուկներին թւայ այդ երազ,
Նըրան կհասնի կռուող բանւորը,
Մարտնչողների է դա հէզ մուրազ:

ՄԵՌԱՆ ԶԿՈՐԱՆ...

Ինչպիսի հերոս ընկերներ մեռան,
Մեռան՝ չկորան...
Կրակն էր ցայտում նրանց աչք-ուներեց,
Շանթը՝ շրթուներեց,
Երբ խօսում էին ծով ամբոխի մէջ
Վիշառ ու կարիքեց.

Վրէժի, ցաւման հրով բորբոքւած՝
 Նրանք բեմ ելան
 Եւ բեմը դարձաւ արիւնով ներկւած՝
 Զոհերի սեղան.

Ինչպիսի՛ հերոս ընկերներ մեռան...
Այսօր բանտերում, վաղը աքսորում,
Միւս օր կախաղան
Հանելու համար, դահիճը դաժան
Կացինն էր սրում.
Բայց հերոսների շուրթերից սեղմւած
Նզովք չէր լսում,
Բաժակն են ըմպում վերածնութեան
Սիւններին կախւած,
Ու հիմուր երգում Յեղափոխութեան՝
Հպարտ—չյաղթւած.
Ի՛նչպիսի՛ հերոս ընկերներ մեռան...

Հէ՛յ, ազատութեան անպարտ զինւորներ,
 Դո՛ւք որ անխռով
 Ներկեցիք փողոց ու գործարաններ
 Ձեր տաք արիւնով,
 Նոյն վայրում այսօր շահիլ չիւաններ,
 Ընթոստ շարքերով,
 Ձեր գովքն են անում... ձեր թափւած արեամբ
 Մնւում, ամրանում...
 Եւ զերթ անմահներ, երգւում ձեր անւամբ
 Ու հպարտանում,
 Որ դուք, յիրաւի, պատւով վեհութեամբ
 Ձեր գործը տարաք,
 Մեռած, չկորած:

ՆԱՀԱՏԱԿՆԵՐԸ

Գալիս են գալիս... նայէք այն ձորին,
 վերջ չկայ ծայրին,
 Գալիս են նրանք սև կմախքների ծով գլուխներով,
 Գալիս, փըրփըրում բիւր ալիքներին
 հառաչանքներով:
 Նրանց բերերը կախաղանների
 չւանից պայթած՝
 Նրանց կրծքերը համազարկերից
 ծակոտւած, ջարդւած՝
 Մէկի բերանից դեռ թարմ արիւնը
 կաթ կաթ ծորալիս,
 Միւսի ճակատին վերքի բերանը
 սև-սևին տալիս—
 գալիս են, գալիս...
 Գալիս են նրանք և ամպերի պէս
 կուտակւում, դիզւում,
 վրէժ են ուզում...
 Նրանց բողոքից դահիճների դէմ
 քարերն են յուզւում.
 Ահռելի նրանց որոտումներից
 ցնցւում է երկինք,
 Հողմը նոր դադրած թևերն է պարզում—
 գուժում փոթորիկ,
 Զգայուն ծովը թափով երազում—
 իններորդ ալիք.
 Եւ մթնոլորդում ցասկոտ հրդեհի
 կայծը բորբոքւում,
 Հզօր, վիթխարի, անխուսափելի
 վրէժը կոփւում...

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

Տեսել ես, ընկեր, ալեկոծումը
 ահեղ ովկիանի,
 Ուր երկու ալիք շարժուն սարի պէս
 իրար են վազում,
 Իրար են վազում փրփուրը բերնին
 յովազի նման
 Ու յոխորտալով, զարնւում ու յուզւում,
 Բաղխւում, փշրւում աւազի նման...
 Իսկ երբ անցնում է վրէժի բոլակն—
 յուզումը վայրի,
 Տեսել ես ինչպէս հանգստանում է
 հսկան ջրերի,
 Մեղմանում է նա... մանուկի նման
 ժպտում է ալիք,
 Ալիքի միջից մի երգ աննման,
 Ծփալով մեղմիկ—
 Շոյում լսելիք...

Հսել ես ընկեր, ըմբոսա երկնքում
 կոչը որոտի,
 Որ դղրդում է որպէս մի պայթիւն
 մեծ թնդանօթի.
 Տեսել ես, ինչպէս ամպերի կրծքին
 կայծակը զիգ-զակ
 Իր նիզն է մխում փութկոտ, շեշտակին
 ու ցնցում աշխարհ.
 Կամ ինչպէս թափով ծառս ծառս է լինում
 ցասկոտ փոթորիկ,
 Հսկայ ծառերին չոքէ-չոք անում—
 դարձնում խաղալիք.

Մինչ որ տեղում է հեղեղը վայրագ
 և ինչպէս փրկանք՝
 Ծանր երկունքից ազատում աշխարհ.
 Բնութիւնը յաղթ ժպտում է ապա
 պայծառ արեգին—
 Որպէս պատասխան չար արհաւիրքին...

Լսե՛լ ես, ընկեր, ծննդականի ճիշդ
 յուսահատ,
 Որ գալարելով, արգանդի ցաւից
 պոռա անընդհատ...
 Վիրաւոր ընկած այն էգ առիւծն է
 այնպէս մռնչում,
 Երկունքի ժամին մեծ ազատութեան
 օգնութեան կանչում.
 Կեանքի և մահու պայքարը մղող
 այն մայրն է տանջւող...
 Իսկ երբ հասնում է յուսոյ բախտաւոր
 ժամը փրկաւէտ,
 Տեսե՛լ ես ինչպէս այդ խորհրդաւոր
 վեհ պայթումից յետ,
 Մի վսեմ, խաղաղ մայրական ժպիտ,
 որպէս վառ հակինթ,
 Փայլում է նրա արնոտ շուրթերում—
 դէմքը զարդարում:

Այսպէս էր ահա և այն վեհ ժամին
 Յեղափոխութեան,
 Երբոր բաղխեցին իրար հակառակ
 երկու ախոյեան.
 Ալիքի նման խուլ մռնչացին
 երկու հզօր ոյժ,

Աշխարհը ցնցւեց... ու եղան կործան
 կարգերը վատոյժ.
 Վայրագ հեղեղին, շանթ ու փոթորկին
 Հետևեց թափով հեղեղ ցնծութեան,
 Երկունքի միջից մանուկը ծնւեց
 Մեծ ազատութեան.
 Ընկեր իմ, ընկեր, ահա Մանուկը
 Յեղափոխութեան.
 Փորձութեան ժամին երդւի՛ր դու կրօնով
 պաշտպանել նրան:



ԳԱՐԲՆԻ ԵՐԳԸ

Զարկ՝ զարկ, ընկեր, մեզ բաղդ կըռենք—
Թո՛ղ դողդողայ մեծ սալը.
Շանթի տարափ մեր շուրջ փռենք—
Լուսաւորւի աշխարհը:

Մենք բնութեան առողջ զաւակ՝
Քրտինք հեղենք—սև արիւն,
Զլուտ բաղկով ճարենք վաստակ—
Մօհտանջ չլինենք թշնամուն:

Զարկ, զարկ, ընկեր, էլ կանգ չառնենք,
Մօտ է անա լաւ օրը...
Այնպէս թափով սալին զարնենք,
Որ դողդողայ աշխարհը...



ՀՀ Ազգային գրադարան



NL0348648

Հրատարակ. «Վարդապետ» գրատարակ № 3

Библиотечка «Впередъ № 3

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ՝

- | | |
|---|-------|
| 1) Памяти велик. учителя (Карлъ Марксъ) | 5 к. |
| 2) Роль коллектива въ истовіи | 10 к. |

ԳԻՆԸ 20 ԿՈՊ.

Տպահանգարանը դրժեկու Են՝ Тифлисъ типо-
графія „Эпоха“ Г. Шихіянци



37075